2.4. <u>Հայցի ապահովման միջոցներ</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Տվյալ պարագայում, քանի որ սկզբնական հայցը ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևաբար ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 2024թ. փետրվարի 16-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պետք է վերացվեն վճռի օրինական ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվի առնելով, որ տվյալ դեպքում, ներկայացվել է պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճ, հետևաբար օրենքով սահմանված կարգով վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

<u>3. Եզրափակիչ մաս</u>

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101, 104, 109, 189, 191, 192, 194, 198, 234.5.-234.12., և 360-362 հոդվածներով՝ դատարանը

ՎՃՌԵՑ

1. <<Վայթ քոմունիքեյշն>> ՍՊ ընկերության ընդդեմ <<Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ դատական դեպարտամենտ>> ՊՄ-ի՝ դատական դեպարտամենտի և <<Վայթ քոմունիքեյշն>> ՍՊ ընկերության միջև 12.07.2023 թվականին կնքված <<Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման>> թիվ <<ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19-1>> ծածկագրով պայմանագրի 29.12.2023թ-ի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին սկզբնական հայցը մերժել:

2. <<Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ դատական դեպարտամենտ>> ՊՄ-ի ընդդեմ <<Վայթ քոմունիքեյշն>> ՍՊ ընկերության և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ <<Էվոկաբանկ>> ՓԲ ընկերության՝ 3 165 157,44 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին հակընդդեմ հայցը բավարարել:

3. <<Վայթ քոմունիքեյշն>> ՍՊ ընկերությունից հօգուտ <<Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ դատական դեպարտամենտ>> ՊՄ-ի բռնագանձել թիվ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ 3 165 157,44 ՀՀ դրամ, որից 1 260 000 ՀՀ դրամ՝ որպես պայմանագրի ապահովման, 1 890 000 ՀՀ դրամ՝ որպես որակավորման ապահովման,

ինչպես նաև Պայմանագրի 6.2 կետով հաշվարկված՝ 15157,44 ՀՀ դրամ՝ որպես տույժի գումարներ:

4. <<Վայթ քոմունիքեյշն>> ՍՊ ընկերությունից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 94955 ՀՀ դրամ՝ որպես հակընդդեմ հայցով նախապես չվճարված պետական տուրքի գումար:

5. Որպես դատական ծախսեր՝ սկզբնական հայցով նախապես վճարված պետական տուրքի և փաստաբանի խելամիտ վարձատրության հարցերը համարել լուծված:

6. Հայցի ապահովման նպատակով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 2024թ. փետրվարի 16-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովումը վերացնել՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո:

7. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

8. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ ԵՐԵՄ ԵՍՈՅԱՆ

Ծանոթություն: Վճիռը մտել է օրինական ուժի մեջ *_01_ _04_ _2024_*թ.

ԴԱՏԱՎՈՐ՝ ԵՐԵՄ ԵՍՈՅԱՆ